

Տարեկան փաստացի տոկոսադրույքը ցույց է տալիս, թե որքան կարժենա վարկը հաճախորդի համար տոկոսագումարները և այլ վճարները սահմանված ժամկետներում և չափերով կատարելու դեպքում:

Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկի օրինակ.

$$A = \sum_{n=1}^N \frac{K_n}{(1+i)^{nt}}$$

I – տարեկան փաստացի տոկոսադրույքն է, որը վարկառուի ընդհանուր ծախսն է, արտահայտված տրամադրված վարկի տարեկան տոկոսով, և որն իր մեջ պարունակում է բոլոր տոկոսներն ու այլ վճարումները, որոնք սպառողը պարտավոր է վճարել վարկի ստացման, ինչպես նաև դրա գործողության ողջ ընթացքում:

A – սպառողին տրամադրվող վարկի սկզբնական գումարն է:

n – վարկի մարմանն ուղղված վճարի թիվը:

N – վարկի մարմանն ուղղված վճարի թիվը:

K_n – վարկի մարմանն ուղղված *n*-րդ վճարի գումարը:

D_n – վարկի տրամադրման օրից մինչև վարկի մարմանն ուղղված *n*-րդ վճարի կատարման օրը ընկած ժամանակահատվածը՝ արտահայտված օրերի թվով:

Փաստացի տարեկան տոկոսադրույքի հաշվարկի օրինակ.

Դիցուք հաճախորդին տրամադրվում է 150.000 ԱՄՆ դոլար գումարի չափով բնակարանի ձեռքբերման վարկ, 180 ամիս մարման ժամկետով, տարեկան 10% տոկոսադրույքով, անուիտետային մարման կարգով:

Հաճախորդի ծախսերն են՝

Հայտի քննարկման վճար՝ 10.000 ՀՀ դրամ
գրավի գնահատման վճար՝ 20.000 ՀՀ դրամ,
միասնական տեղեկանքի վճար՝ 10.000 ՀՀ դրամ,
գրավադրման վճար՝ 72.000 ՀՀ դրամ:

Ապահովագրություն՝ վարկի մնացորդից՝ 107.000 ՀՀ դրամ
Տվյալ վարկի տարեկան փաստացի տոկոսադրույքը կկազմի 10,53 % :